ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱՖԱՐՈՅՖՅԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 67 - 68 (16564) ՇԱԲԱԹ, 26 ՕԳՈՍՏՈՍԻ 2017 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-ԻՆ՝ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու հրամանագրով եւ Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու կոնտրասիգնացիայով, քաղաքների ու շրջանների ղեկավարների, ինչպես նաեւ տեղական օրենսդիր մարմինների՝ սակրեբուլոյի պատգամավորների ընտրությունները նշանակվել է հոկտեմբերի 21-ին:

Վրաստանի օրենսդրության համաձայն, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները պետք է անցկացվեն հոկտեմբերին:

- Ես տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները նշանակել եմ 2017 թվականի հոկտեմբերի 21-ին, եւ փաստաթուղթն ուղարկել եմ կոնտրասիգնացիայի (համատեղ ստորագրման),- հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին՝ օգոստոսի 22-ին անցկացված ճեպազրույցում:

Վրաստանի օրենսդրության համաձայն, ընտրությունների ամսաթվի նշանակման փաստաթուղթն ուղարկվեց Վրաստանի վարչապետին, որը, կառավարության անդամների հետ միասին, քննարկեց այս կարգադրությունը: Քննարկման արդյունքներով Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին իր ստորագրությամբ հաստատեց՝ հոկտեմբերի 21-ին տեղական ինքնակառավարման մարմինների անցկացման որոշումը:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼՈՒ Է ԱՌԱՋԻԿԱ 57 ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Տեղական ինքնակառավարման ընտրությունների օրվա վերաբերյալ, Վրաստանի նախագահի հայտարարությունից եւ վարչապետի համաստորագրումից հետո, օգոստոսի 22-ին անցկացվեց Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստ, որը հաստատեց հոկտեմբերի 21-ին անցկացվելիք ընտրությունների ժամանակացույցը, քննարկվեց ընտրությունների հետ կապված մյուս նշանակալի ընթացակարգերը: Նիստի ավարտից հետո, հրավիրված մամլո ասուլիսում, ԿԸՀ-ի խոսնակ Աննա Միքելաձեն ասաց, որ ընտրավարչակազմը պատրաստ է՝ ընտրական սուբյեկտների համար մատչելի ընտրամիջավայրում

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԸ ՄԵԿՆԱՐԿԵՑ

Օգոստոսի 22-ին, Վրաստանում պաշտոնապես մեկնարկեց տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների նախընտրական քարոզարշավը:

Քարոզարշավի մեկնարկի օրը ուժի մեջ մտան նաեւ այն սահմանափակումները, որոնք գործում են՝ պետական կառույցներում աշխատող պաշտոնական անձանց նկատմամբ: Սկսում են գործել բոլոր այն սահմանափակումները, որոնք նախատեսված են ընտրական օրենսգրքով, եւ, որոնք առնչվում են ընտրական ժամանակահատվածում վարչական ռեսուրսների, բյուջետային միջոցների, պաշտոնական կամ ծառայական դիրքի օգտագործմանը:

Նշենք, որ, խորհրդարանի գարնանային նստաշրջանի ավարտին, «Վրացական երազանք» խմբակցության պատգամավորները ներկայացրին ընտրական օրենսդրության փոփոխություն, ըստ որի նախագահը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները նշանակում է ընտրությունների անցկացման օրվանից 60 օր շուտ:

ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ

ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՔՍԱՆԵՐԿՈՒ ՏԱՐԵԿԱՆ

Ուղիղ քսաներկու տարի առաջ՝ 1995 թվականի օգոստոսի 24-ին, հաստատվեց նորանկախ Վրաստանի առաջին Սահմանադրության տեքստը:

Վրացական Սահմանադրությունը սկսվում է հետեւյալ բառերով. «Մենք՝ Վրաստանի քաղաքացիներս, որոնց անհողդողդ կամքն է ժողովրդավարական հասարակարգի, տնտեսական ազատության, սոցիալական եւ իրավական պետության հաստատումը, հանրաճանաչ իրավունքների եւ ազատությունների ապահովումը, պետական անկախության եւ մյուս ժողովուրդների հետ խաղաղ հարաբերությունների ամրապնդումը, հենվելով վրացական ազգային պետականության բազմադարյա ավանդույթների եւ 1921 թվականի Վրաս-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ՈՉ ՄԻԱՅՆ ԿԱՐԴԱԼՈՒ ԵՆՔ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՅԼԵՎ ՄԻԱՍԻՆ ՊԵՏՔ Է ԳՐԵՆՔ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ»

Օգոստոսի 24-ին, Վրաստանի Սահմանադրության օրվա առթիվ, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հատուկ ուղերձով դիմեց երկրի բնակչությանը:

Ուղերձում, մասնավորապես, ասված է. «Սահմանադրությունը՝ ինչպես օրհներգը, դրոշը եւ պետական զինանշանը, միավորում է բոլորիս, այնպես, ինչպես միավորում է մեր ազգային՝ «Ուժը միասնության մեջ է» կարգախոսը: Հենց այն պատճառով, որ մենք միասնական ենք, մենք վերացրինք այսօրվա տոնական օրվա միջոցառումները, քանի որ միասնական ենք այն մարդկանց հետ, ովքեր, հինգ օրվա ընթացքում, անձնազոհաբար պայքարում են տարերքի դեմ: Վրաստանի բոլոր քաղաքացիների անունից ցանկանում եմ նրանց շնորհա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՏԱՐԵՐՔ

ԲՈՐԺՈՄԻԻ ԿԻՐՃԸ՝ ԿՐԱԿԻ ՃԻՐԱՆՆԵՐՈՒՄ. 366 ԲՌՆԿՈՒՄՆԵՐ՝ ՄԵԿ ՇԱԲԱԹՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՀԱՅ ՓՐԿԱՐԱՐՆԵՐԻ 57 ՀՈԳԱՆՈՑ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Օգոստոսի 20-ին, ցերեկը, Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանի Բորժոմի-Խարագաուլիի ազգային արգելանոցի տարածքում, Բորժոմիի մոտակայքում, Բակուրիանի տանող ճանապարհին, Դաբա գյուղի հարակից տարածքում հրդեհ բռնկվեց, որը, փաստորեն, այսօր էլ լրիվությամբ չի մեկուսացվել:

Ընդ որում, մեկ շաբաթվա ընթացքում, վավերացվել է հրդեհի 366 բռնկում:

Ուժեղ քամին նպաստում էր կրակի տարածմանը: Աղետի առաջին օրը դեպքի վայրում մոբիլիզացվել էին Վրաստանի ՆԳ նախարարության արտարարգ իրավիճակների դեպարտամենտի ստորաբաժանումները, հրշեջներ, մեկ ուղղաթիռ: Թեպետ, այդ ուժերով կրակի տեղափակումը չհաջողվեց, եւ հրդեհի օջախներ ծավալվեցին հարակից վայրերում: Կարճ ժամանակահատվածում կրակի ճիրաններում հայտնվեց արգելանոցի դժվարհասանելի տարածքի հինգ հեկտարը:

ՄԱԿ-ի մարդասիրական գործերի համակարգման գրասենյակի միջոցով (Virtual OSOCC ազդարարման համակարգ)՝ Վրաստանի իշխանություններն օգնության հայտ են ներկայացրել միջազգային հանրությանը՝ Բորժոմիում բռնկված անտառային հրդեհի մարմանն աջակցելու խնդրանքով: Խնդրանքին անմիջապես արձագանքել են Հայաստանի, Ադրբեջանի, Թուրքիայի իշխանությունները: Իր օգնությունն է առաջարկել Ռուսաստանի Դաշնությունը: Օգնություն ցուցաբերելու պատրաստակամություն են հայտնել Գերմանիան, Իտալիան, Իսրայելը:

Հրդեհաշիջմանը մասնակցում է Վրաստանի ՆԳ նախարարության սահմանապահ ոստիկանության ուղղաթիռը, բայց դա բավարար չէ եւ, վրացական կողմի խնդրանքով, Ադրբեջանը եւս մեկ ուղղաթիռ ուղարկեց Վրաստան: Դրա հետ մեկտեղ, ուշ գիշերին կայացած արտակարգ շտաբի նիստի ընթացքում, որը ղեկավարում էր Վրաստանի ներքին գործերի նախարար Գիորգի Մղեբրիշվիլին, հայտնի դարձավ, որ հրդեհի վայր ժամանեց Թուրքիայի ռազմաօդային ուժերի եւս երկու ուղղաթիռ:

Ողջ օրվա ընթացքում՝ աղետի գոտում, անընդմեջ գործում էին Ադրբեջանից եւ Թուրքիայից ուղար-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՅ ՀՐՇԵՋ-ՓՐԿԱՐԱՐՆԵՐԸ ԿԱՆԽԵՑԻՆ ԿՐԱԿԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ

Հայ փրկարարները զեկուցում են Վրաստանի վարչապետին

Վրաստանում գտնվող Հայաստանի արտակարգ իրավիճակների նախարարության հրշեջ-փրկարարների 57 հոգանոց ջոկատը, 8 հրշեջ-փրկարարական եւ 1 փրկարարական ավտոմեքենայով, աղետների բժշկության կենտրոնի 1 մեքենայով եւ շարժական կառավարման կետով, հրդեհաշիջման աշխատանքներ են ծավալել անտառային 3 տեղամասերում: Տեղամասում է գտնվում նաեւ նախարարության փրկարար ծառայության տնօրեն, փ/ծ գնդապետ Մուշեղ Ղազարյանը: Հայ հրշեջ-փրկարարները, պայքարելով հրդեհի դեմ, կարողացել են կասեցնել կրակի առաջխաղացումը Ծաղվերիի բնակավայրի ուղղությամբ եւ մեկուսացնել հրդեհի բոլոր օջախները: Իրականացվում են հետահանգեցման աշխատանքներ: Երրորդ տեղամասի տարածքում եղած անտառի խորքում առկա են եղել հրդեհի բազմաթիվ օջախներ: Հայ հրշեջ-փրկարարներին այստեղ նույնպես հաջողվել է մեկուսացնել կրակի օջախները եւ անցնել մարման աշխատանքներին՝ անտառի խորքը հասնելու համար կիրառելով հրշեջ խողովակներից կազմված եռաճյուղ մայրուղային գիծ:

ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ

ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՔՍԱՆԵՐԿՈՒ ՏԱՐԵԿԱՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տանի սահմանադրության հիմնական սկզբունքների վրա, հռչակում ենք սույն Սահմանադրությունը»:

Անցած տարիների ընթացքում Վրաստանի Սահմանադրության 109 հոդվածները փոխվել են 33 անգամ: Բոլորից շատ սահմանադրական փոփոխություններ կատարվել են Վրաստանի երրորդ նախագահ Միխեիլ Սաակաշվիլու օրոք՝ 25 անգամ:

Նրանից հետո, երբ «Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստան» կուսակցությունը, 2016 թվականի խորհրդարանական ընտրությունների արդյունքներով, ստացավ սահմանադրական մեծամասնություն՝ սահմանադրության փոփոխությունների հարցը կրկին դարձավ հրատապ: Վրաստանի խորհրդարանն երկու ընթերցումներով արդեն ընդունել է սահմանադրական փոփոխությունները եւ վերջնական՝ երրորդ ընթերցմամբ սահմանադրության նոր նախագծի ընդունումը ծրագրվում է ընթացիկ տարվա աշնանը: Միաժամանակ, կառավարող կուսակցության եւ ընդդիմադիր կուսակցությունների միջեւ սահմանադրական փոփոխությունների կապակցությամբ, տարվում են խորհրդատվություններ, քանի որ փոփոխությունների մի մասը ընդդիմության համար անընդունելի է:

Կառավարող կուսակցության կողմից ներկայացված փոփոխությունների մի մասը նախատեսում է այն, որ Վրաստանը, ի տարբերություն ներկայիս կիսախորհրդարանական եւ կիսանախագահական երկրի, վերածվելու է խորհրդարանական հանրապետության, վերացվում է երկրի նախագահի անմիջական ընտրությունը եւ՝ միամանդատ ընտրամարզերում պատգամավորների ընտրության ինստիտուտը:

Փոփոխություններն ուժի մեջ են մտնելու՝ 2018 թվականի նախագահական ընտրությունների արդյունքների հրապարակումից հետո:

Նշենք, որ 1995 թվականի օգոստոսի 24-ին ընդունված սահմանադրության բնօրինակը պահվում է Վրաստանի նախագահի աշխատակազմում: Անցած բոլոր տարիներին, Սահմանադրության օրվա առթիվ, նախագահն անցկացնում էր ընդունելություն, թեպետ այս տարի՝ Բորժոմի-Խարագաուլիի արգելանոցում ծագած հրդեհի կապակցությամբ, ստեղծված իրավիճակի առթիվ, ընդունելությունը չի կատարվել:

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ՈՉ ՄԻԱՅՆ ԿԱՐԴԱԼՈՒ ԵՆՔ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՅԼԵՎ ՄԻԱՍԻՆ ՊԵՏՔ Է ԳՐԵՆՔ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կալություն հայտնել անձնագրի աշխատանքի համար:

Սակայն մենք չենք միավորվում միայն դժվարության ժամանակ, մենք միասնական ենք մեր նպատակներում: Միաժամանակ, մենք նաեւ առանձնահատուկ ենք, եւ այդ պատճառով Վրաստանը ժողովրդավարական է: Իսկ ժողովրդավարական Վրաստանի գլխավոր փաստաթուղթը Վրաստանի սահմանադրությունն է: Վերջին ժամանակներում հազարավոր մեր քաղաքացիներ, ողջ երկրի մասշտաբով, մասնակցեցին՝ «Միասին ընթերցենք Սահմանադրությունը» միջոցառմանը: Սակայն, մենք ոչ միայն պետք է միասին կարդանք սահմանադրությունը, այլեւ միասին գրենք սահմանադրությունը: Քանի որ սահմանադրության գլխավոր իմաստն ու բովանդակությունը նրանում է, որ ժողովրդավարական պետության քաղաքացիները հենց այդ սահմանադրության միջոցով վարձակալում են մեր իշխանությանը: Հետեւաբար, տրամաբանական է, որ այն տեքստը, որով սկսվում է Վրաստանի սահմանադրությունը. «Մենք՝ Վրաստանի քաղաքացիներս...» մարմնավորվի մեր սահմանադրական փաստաթղթում: Ուժը միասնության մեջ է, սահմանադրությունը մեզ միավորում է, իսկ միասնությունը մեր երկրի հզորության նախադրյալն է»,- ասված է նախագահի ուղերձում:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ԿՈԲԱ ԳՎԵՆԵՏԱՁԵ. «ԶԳՈՒՇԱՑՆՈՒՄ ԵՄ, ՄԱՆՐԱՄԱՍՆ ԾԱՆՈԹԱՑԵՔ ԲԱՆԿԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿԱՐԳԻՆ»

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԴԻՄՈՒՄԸ՝ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ

Վրաստանի Ազգային բանկի նախագահ Կոբա Գվենետաձեն, անդրադառնալով սպառողների իրավունքների պաշտպանության համար կատարված փոփոխություններին, սպառողներին կոչ է անում առավել մանրամասնորեն ծանոթանալ նոր կարգին:

Ն ր ա պ ա ր զ ա բանմամբ, նոր կարգին մանրամասն ծանոթացնմամբ, սպառողները սկզբիցեւեթ կկանխեն հնարավոր հիմնախնդիրները:

«Վրաստանի Ազգային բանկի առաջնահերթություններից մեկը սպառողների իրավունքների պաշտպանությունն է: Եվ այդ ուղղությամբ վերջին ժամանակներս մի շարք քայլեր են իրականացվել:

2017 թվականի հունիսի 1-ից, ֆինանսական հատվածի սպառողների համար, գործարկվեց նոր կարգ: Վերոնշյալ կարգավորման համաձայն, սպառողներին տրվում է մինչեւ ստորագրելը պայմանագրի տեքստի ստացման իրավունք: Նման իրավունք է վերապահվում նաեւ վարկի երաշխավորի համար: Նրանց վերապահվում է նաեւ իրավունք մանրամասն տեղեկատվություն ստանալ նախօրոք վարկի անվճար մարման եւ այլ հարցերի վերաբերյալ: Խորհուրդ ենք տալիս՝ մանրամասն ծանոթանալ նոր կարգին, որպեսզի նախօրոք կանխեք հնարավոր հիմնախնդիրները եւ առավել լավ պաշտպանեք ձեր իրավունքները:

Միաժամանակ, ցանկանում եմ նշել, եթե ֆինանսական կազմակերպությունների հետ ծագեն հիմնախնդիրներ, ապա կարող եք ձեր բողոքները բանավոր, գրավոր կամ էլեկտրոնային տարբերակով, cp@nbg.gov.ge փոստով առաքել մեզ կամ կապվել Ազգային բանկի թեժ հեռախոսահամարով՝ 2-406-406»:



ԱՄՆ

ԶՈՐՔԵՐԸ ԱՖՂԱՆՍՏԱՆԻՑ ԴՈՒՐՍ ՉԵՆ ԲԵՐՎԻ

ԱՄՆ-ի նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ Աֆղանստանից Միացյալ Նահանգների արագ հեռանալը կհանգեցնի՝ այնտեղ վակուումի առաջացման, որը կլրացնեն զինյալները:

Թրամփի խոսքով, ահաբեկչության դեմ պայքարելու համար, ԱՄՆ կընդլայնի Իսլամական հանրապետության տարածքում գտնվող իր զինված ուժերի լիազորությունները: Ընդսմին, ԱՄՆ այլեւս վաղօրոք չի հայտնելու իր ռազմական գործողությունների մասին եւ չի ասելու Աֆղանստանում գործող իր զորակազմի թվաքանակի մասին:

Բացի այդ, Թրամփը խստացրել է ԱՄՆ դիրքորոշումը Իսլամաբադի նկատմամբ, նախազգուշացրել է, որ կարող է նվազեցնել անվտանգության ոլորտում ցուցաբերվող օգնությունը, եթե նա չկանխի զինյալների կողմից անվտանգ պատսպարանների օգտագործումն իր տարածքում:

ՄԱԿ

ՏԱՐԵՍԿԶԲԻՑ ԶՈՀՎԵԼ ԿԱՄ ԱՆՀԱՅՏ ԿՈՐԵԼ Է 2,2 ՀԱԶԱՐ ՄԻԳՐԱՆՏ

Տարեսկզբից ավելի քան 2,2 հազար փախստականներ եւ միգրանտներ են զոհվել կամ անհայտ կորել՝ փորձելով Եվրոպա հասնել Միջերկրական ծովով կամ ցամաքային երթուղով: Օգոստոսի 24-ին, այս մասին հայտնեց ՄԱԿ-ի՝ Փախստականների գործերի գերագույն կոմիսարի վարչությունը, որը ժնեւում ներկայացրել է «Հուսահատ ճանապարհորդություն» զեկույցը՝ նվիրված դեպի Եվրոպա միգրացիային:

ՄԱԿ-ի վարչության տվյալներով, անօրինական միգրանտների հոսքը, որոնք կտրում-անցնում են Միջերկրական ծովը, կտրուկ կրճատվել է: Առաջին կիսամյակում Եվրոպա է ժամանել շուրջ 107 հազար մարդ: Ըստ որում, Թուրքիայից Հունաստան երթուղում անկում է դիտվում 94 տոկոսով. հունվարից Հունաստանի ափերի մոտ են հանգրվանել 9 հազար միգրանտ եւ փախստական (2016 թվականի՝ առաջին վեց ամսվա, ավելի քան 150 հազարի դիմաց):

ՏԱՐԵՐՔ

ԲՈՐԺՈՄԻԻ ԿԻՐՃԸ՝ ԿՐԱԿԻ ՀԻՐԱՆՆԵՐՈՒՄ. 366 ԲՌՆԿՈՒՄՆԵՐ՝ ՄԵԿ ՇԱԲԱԹՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կված ուղղաթիռներն ու ինքնաթիռը: Կրակը մարելու համար Բելառուսից ժամանել էր հրդեհի մարման ամենամած տարողություն (15 տոննա ջուր) ունեցող ուղղաթիռը:

Օգոստոսի 22-ին, Հայաստանի նախագահի եւ վարչապետի հանձնարարությամբ, արտակարգ իրավիճակների նախարարությունից Վրաստան ուղեւորվեց փրկարար ծառայության շարասյունը՝ 8 հրշեջ-փրկարարական եւ 1 փրկարարական ավտոմեքենա, աղետների բժշկության կենտրոնի 1 մեքենա եւ շարժական կառավարման կետ (ընդհանուր՝ 57 հոգանոց անձնակազմով), որը դեպքի վայրում ծառայելու է՝ որպես օպերատիվ գործողությունները համակարգող շտաբ:

Նույն օրը Հայաստանից ժամանած փրկարարական շարասյունը տեղակայվեց Ծաղվերիի բնակավայրի մոտ եւ՝ ստանալով համապատասխան առաջադրանք ու իրենց հատկացված տեղամասում իրականացնելով հետախուզություն, հայ հրշեջ-փրկարարները ձեռնամուխ եղան հրդեհաշիջման աշխատանքներին:

Համատեղ ուժերով քառօրյա աշխատանքի արդյունքում՝ օգոստոսի 24-ին հրշեջներին հաջողվեց որոշակիորեն մեկուսացնել կրակը, սակայն պահպանվում են առանձին օջախներ: Իրադրությունը բարդացնում են լեռնային ռելիեֆը, քամին ու չոր եղանակը: Նախնական տվյալներով, արդեն այրվել է տասնյակ հեկտար եզակի անտառ:

- Կան բազմաթիվ օջախներ, որոնք, այսօրվա ընթացքում եւ գուցե նաեւ վաղը, հարկավոր է մշակել ջրով: Բայց ներկա պահին կրակի օջախներ ոչ մի տեղ չկան,- օգոստոսի 24-ին հայտարարեց Բակուրիանիի բնապահպանության դեպարտամենտի ղեկավար Թամազ Գամցեմլիձեն:

Ինչպես նշում են հրշեջներն ու մասնագետները, մերձակա բնակավայրեր կրակի տարածման վտանգ չկա:

Տեղում շարունակում են աշխատել 400 հրշեջ-փրկարարներ, հարյուր անտառապահներ եւ Վրաստանի ՆԳ նախարարության հատուկ առաջադրանքների դեպարտամենտի 500 աշխատակիցներ: Հրդեհի էպիկենտրոնը 11 կիլոմետր է հեռու Բորժոմիի առողջարանից:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅ ՓՐԿԱՐԱՐՆԵՐԻՆ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին արդեն օգոստոսի 23-ին գտնվում էր Բորժոմի-Խարագաուլիի ազգային արգելանոցի կրակով բռնկված տարածքներում, ծանոթանում հրդեհի մարման ուղղությամբ իրականացվող աշխատանքների ընթացքին: Վրաստանի նախագահը շնորհակալություն հայտնեց օգնության խնդրանքին արձագանքող բոլոր երկրներին՝ այդ թվում Հայաստանին:

ԲԱԺԱՌՎԱԾ ՉԷ, ՈՐ ՀՐԴԵՀԸ ԴԻՎԵՐՍԻԱՅԻ ԱՐԴՅՈՒՆՔ Է

Բորժումի-Խարագաուլիի ազգային արգելանոցում օգոստոսի 20-ին ծագած հրդեհի մարման ընթացքում, հրշեջների կողմից տեղում հայտնաբերվել է բենզինի 20 լիտրանոց տարողություն, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ ծագած հրդեհը կանխամտածված դիվերսիայի արդյունք է. «Ես չեմ բացառում, որ դա այդպես լինի, քանի որ այս ամենն ընդունում է բավական ինտենսիվ կազմակերպված եւ կետային բնույթ»,- հայտարարեց Վրաստանի խորհրդարանի պաշտպանության եւ անվտանգության կոմիտեի փոխնախագահ Կոբա Կոբալաձեն:

Նշենք, որ ազգային արգելանոցում ծագած հրդեհի կապակցությամբ, քրեական գործ է հարուցվել:

ՎԵՐՋԻՆ ՀԻՆԳ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԱՅՐՎԵԼ Է 1300 ՀԵԿՏԱՐ ԱՆՏԱՌ

Վերջին հինգ տարվա ընթացքում Վրաստանում հրդեհը ոչնչացրել է 1300 հեկտար անտառազանգված:

Այսպես, 2012 թվականին, վավերացված անտառային հրդեհի 11 դեպքերի արդյունքում, ոչնչացել է 198 հեկտար տարածք: 2013 թվականին վավերացվել է 33 հրդեհ, որը դարձել է 87 հեկտար անտառային զանգվածի ոչնչացման պատճառ: 2014 թվականին վավերացվել է 69 հրդեհ, ոչնչացվել է 704 հեկտար տարածք: 2015 թվականին, հրդեհի 62 դեպքերի արդյունքում, ոչնչացվել է 169 հեկտար անտառազանգված, իսկ 2016 թվականին վավերացված հրդեհի 43 դեպքերը դարձել են 212 հեկտար անտառազանգվածի ոչնչացման պատճառ:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՈԼՈՐՏ

ՔՆՆԱՐԿՎԵՑ ԳՅՈՒՂԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Օգոստոսի 18-ին, Թբիլիսիում, «Rooms» հյուրանոցում, կայացավ Վրաստանի գյուղական շրջանների զարգացման ռազմավարության համար 2018-2020թթ. գործողությունների ծրագրի քննարկումը:

Հանդիպմանը մասնակցում էին Վրաստանի բոլոր 8 քաղաքապետարանների ոչ կառավարական կազմակերպությունների անդամները: Ներկա էին նաեւ գյուղատնտեսության փոխնախարար Նոդար Կերեսելիձեն, վերլուծության եւ քաղաքականության դեպարտամենտի նախագահ Եկատերինա Զվիաձեն, ուրիշներ:

Վրաստանի գյուղատնտեսության նախարարությունը ներկայացրեց «2018-2020թթ. Վրաստանի գյուղատնտեսության զարգացման ռազմավարության մասին գործողությունների ծրագիրը», որում ներկայացվել են գյուղական շրջանների ապագա զարգացման ծրագրերը:

Առանձին ներկայացվեցին գյուղի՝ գյուղատնտեսական, տնտեսական, մշակութային, ենթակառույցային զարգացման ծրագրերը, ինչպես նաեւ գյուղերում զբոսաշրջության եւ կրթության զարգացումը: Ծրագրերը ֆինանսավորվում են պետության եւ դոնորների կողմից՝ համատեղ:

Անցկացվող աշխատանքի բյուջեն 2018 թվականին կազմում է 706 699.1 լարի, 2019 թվականին՝ 665 281.7 լարի, 2020 թվականին՝ 652 373.1 լարի:

Ռազմավարությունը եւ գործողությունների ծրագիրը մշակվել է Վրաստանի կառավարության կողմից՝ Եվրամիության եւ ՄԱԿ-ի Պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) աջակցությամբ, Եվրոպական բարիդրացիություն ծրագրի շրջանակներում (ENPARD «Գյուղական շրջանների զարգացման ծրագրեր»):

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

«ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՇԱԲԱԹ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ»

Օգոստոսի 20-ին, «Եվրամիության (ԵՄ) շաբաթ Ախալքալաքիում» նախագծի շրջանակներում, Ախալքալաքիի մունիցիպալիտետի 7 դպրոցների ուսուցիչների համար անցկացվեց թրեյնինգ-վարժանք՝ «ԵՄ-ը եւ Վրաստանը» թեմայով:

- Ինչպե՞ս անցան վարժանքները - այս հարցով դիմեցինք «Հասարակական կրթություն՝ հանուն իրավական պետության» հասարակական կազմակերպության նախագահ Սեդա Մելքումյանին:

- Ասեմ, որ վարժանքները կազմակերպեց եւ անցկացրեց «Քաղաքացիական կրթությունը՝ օրենքի գերակայության համար» կազմակերպությունը՝ «Հանդուրժողականության, քաղաքացիական գիտակցության եւ ինտեգրման աջակցության ծրագրերի» շրջանակներում, որն իրականացվել է Վրաստանում՝ ՄԱԿ-ի կողմից, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ֆինանսական աջակցությամբ:

Թրեյնինգն անցկացվեց պատմության, աշխարհագրության եւ քաղաքացիական կրթության ուսուցիչների համար: Յուրաքանչյուր դպրոցի ուսուցչի եւ աշակերտի համար պատրաստվել էին «Վրաստան-ԵՄ. Ակնկալիքներ, առասպելներ եւ իրականություն» գրքույկները:

Մինչ թրեյնինգը՝ նույն նախագծի շրջանակներում, 5 գյուղերում անցկացվել են երկու սոցիալական հարցումներ:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՆԱԻՐԻ ԻՐԻՑՅԱՆԸ՝ «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԽԱԼՔԱԼԱՔԻԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ

Օգոստոսի 19-ին, «Վրացական երազանք» կառավարող կուսակցության Ախալքալաքիի նախընտրական շտաբում, տեղի ունեցավ կուսակցության ներկայացուցիչների հանդիպում:

Հանդիպմանը հավաքվածներին հայտարարվեց, որ կուսակցության կենտրոնական քաղխորհրդի կողմից ընդունվեց որոշում, ըստ որի՝ կուսակցության Ախալքալաքիի կազմակերպության ղեկավար է նշանակվել Ախալքալաքիի մունիցիպալիտետի սակրեբուլոյի փոխնախագահ, 54-ամյա Նաիրի Իրիցյանը:

Հիշեցնենք, որ Նաիրի Իրիցյանը ժամանակին աշխատել է հարկային ոստիկանությունում, եղել է Ախալքալաքիի քաղաքապետ: Վեց տարի աշխատել է Ախալքալաքիի մունիցիպալիտետի վարչության նախագահի պաշտոնում:

Նշենք, որ կուսակցության շրջանային կազմակերպությունը մինչ այդ գլխավորում էր մունիցիպալիտետի վարչության ներկայիս նախագահ Էդուարդ Աղասարյանը:

«ՀԱՅՐԵՆԱՍԵՐՆԵՐԻ ԴԱՇԻՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ

Օգոստոսի 20-ին, Ախալքալաքիում անցկացվեց «Վրաստանի Հայրենասերների Դաշինք» կուսակցության գրասենյակի հիմնադիր ժողովը:

Միջոցառմանը ներկա էին Թբիլիսիից ժամանած «Վրաստանի հայրենասերների դաշինք» կուսակցության հիմնադիրներ Դավիթ Թարխան-Մոուրավին եւ Իրմա Ինաշվիլին:

Հանդիպմանը, որն անցկացվեց հարց ու պատասխանի ձեւաչափով, կուսակցության ղեկավարները պատասխանեցին ներկաներին հետաքրքրող հարցերին:

Հանդիպմանը ընտրվեց «Վրաստանի Հայրենասերների Դաշինք» կուսակցության Ախալքալաքիի մունիցիպալիտետի բաժանմունքի յոթ հոգուց կազմված բյուրոն:

ՇՐՋԱԿԱ ՍԱՄՍԱԽՈՒՐ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՉՀՌՉԱԿԱԳՐՎԱԾ ՈՍԿԵ ԶԱՐԴԱՐԱՆՔՆԵՐ՝ ՄԱՔՍԱԿԵՏԵՐՈՒՄ

Օգոստոսի 18-19-ին, «Ղազբեգի» եւ «Լագոդեխի» սահմանային անցումակետերում, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային աշխատակիցները, ընդհանուր առմամբ, հայտնաբերել են 239,277 գրամ չհռչակագրված ոսկե զարդարանքներ: Օգոստոսի 18-ին, «Լագոդեխի» անցումակետում, 63,09 գրամ չհռչակագրված ոսկե զարդարանքներ է հայտնաբերվել Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Մ.Զ.-ի մոտ: Ապրանքի մաքսային արժեքը կազմում է 4840,24 լարի: Վրաստանի հարկային օրենսգրքի 229 հոդվածի 10-րդ բաժնի համաձայն, իրավախախտում թույլ տված անձինք՝ որպես պատժամիջոց տուգանվեցին 4840,24 լարիով:

Օգոստոսի 19-ին, 176,18 գրամ չհռչակագրված ոսկեղեն է հայտնաբերվել «Ղազբեգի» անցումակետում Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Դ.Ի.-ի պայուսակում: Ապրանքի մաքսային արժեքը կազմում էր 10,0422,18 լարի: Հարկային օրենսգրքի համաձայն, իրավախախտողը տուգանվել է հենց այդ գումարով:

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ՄԱՔՍԱՆԵՆԳԱՅԻՆ ՊԱԼԱԴԻՈՒՄ

Օգոստոսի 19-ին, Վրաստան-Հայաստան սահմանային Սադախլո ավտոմոբիլային մաքսային անցումակետում, ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային աշխատակիցները, կասկածի հիման վրա, խուզարկել են Հայաստանի քաղաքացի Ա.Հ.-ին եւ հայտնաբերել չհռչակագրված ապրանք, մասնավորապես, թափոնի տեսքով պալադիում, ընդհանուր առմամբ 65,83 գրամ քաշով: Ապրանքի մաքսային արժեքը կազմում է 5171,24 լարի:

Վրաստանի հարկային օրենսգրքի համաձայն, չհռչակագրված ապրանքը տեղափոխող քաղաքացին տուգանվել է 5171,24 լարի գումարով:

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



ՊԱՏՎՈ ՇՔԱՆՇԱՆ՝ ԵՄ-Ի ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻՆ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հանդիպում ունեցավ Եվրամիության դիտորդական առաքելության ղեկավար Կեստուտիս Յանկաուսկասի հետ, ով Վրաստանում ավարտում է իր դիվանագիտական գործունեությունը:

Վրաստանի նախագահը նրան շնորհակալություն հայտնեց առաքելական գործունեության կատարման, դրա նշանակության եւ դերի ամրապնդման գործում ներդրած ավանդի համար: Գիորգի Մարգվելաշվիլին Կեստուտիս Յանկաուսկասին պարգեւատրեց «Պատվո շքանշանով»:

ՄԵՐԱԲ ՃԱՆՏՈՒՐԻՁԵՆ ԿԳԼԽԱՎՈՐԻ ԳՈՒՐԻԱՅԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԱՐԱՆԸ

Գուրիայի երկրամասում պետական լիազոր-նահանգապետ է նշանակվել Մերաբ Ճանտուրիձեն: Նրան տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակիցներին ներկայացրել է տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքների փոխնախարար Կախա Գուլեդանին:

Մերաբ Ճանտուրիձեն մասնավոր եւ հանրային հատվածներում աշխատանքի հարուստ փորձ ունի: Նա 2013-2014 թվականներին Գուրիայի փոխնահանգապետն էր, իսկ մինչ այդ՝ տարիներ շարունակ եղել է Օզուրգեթիի մունիցիպալիտետի վարչության նախագահ:

ԱՐՉԻԼ ՋԱՓԱՐԻՁԵՆ՝ ՌԱՃԱ-ԼԵՉԽՈՒՄԻԻ ԵՎ ՔՎԵՄՈ ՍՎԱՆԵԹԻԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ

Ռաճա-Լեչխումիի եւ Քվեմո Սվանեթիի նահանգապետ է նշանակվել Արչիլ Ջափարիձեն:

Նոր նահանգապետն արդեն անցել է աշխատանքի: Նրան տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակիցներին ներկայացրել է տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքների փոխնախարար Կախա Գուլեդանը:

Արչիլ Ջափարիձեն 1995 թվականին ավարտել է Իվանե Ջավախիշվիլու անվան Թբիլիսիի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը: 2014-2017 թվականներին զբաղեցրել է Ռաճա-Լեչխումիի եւ Քվեմո Սվանեթիի նահանգապետի առաջին տեղակալի պաշտոնը, մինչ այդ հանդիսացել է Ամբրոլաուրիի սակրեբուլոյի անդամ:

ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(25 օգոստոսի)

Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը.

ՏԱՐԱԴՐԱՄ	ԱՌՔ	ՎԱՃԱՌՔ
ԱՄՆ ԴՈԼԱՐ	2.387	2.437
ԵՎՐՈ	2.790	2.899
ՌՈՒԲԼԻ	0.0380	0.0440
ԴՐԱՄ	0.0038	0.0055

Օգոստոսի 18-ի համեմատ, դոլարի կուրսը աճել է 0,027 լարիով:

ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-ԻՆ՝ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ընտրությունների անցկացմանը: «Ընդհանուր առմամբ, ընտրողներն ընտրելու են 64 սակրեբուլոյի 2058 անդամի եւ 64 քաղաքապետի: Ընտրական վարչակազմն արդեն սկսել է օրենսդրությամբ սահմանված ընտրական ընթացակարգերի իրականացումը, նաեւ այսօրվանից գործում են օրենսդրական բոլոր պահանջները, որոնք առնչվում են ընտրություններին: Մասնավորապես, այսօրվանից գործում է նախընտրարշավի իրականացման

կարգը, նաեւ՝ բյուջետային գումարների պաշտոնական կամ ծառայական վիճակի օգտագործման արգելքի նորմերը»,- հայտարարեց Աննա Միքելաձեն:

Նրա խոսքով, ընտրություններին մասնակցել ցանկացող կուսակցություններն ու նախաձեռնողական խմբերը պարտավոր են, մինչեւ ընտրությունների օրը, առնվազն 57 օրվա ընթացքում, համապատասխան դիմում ներկայացնել ԿԸՀ-ին: «Նախաձեռնողական խմբերի կապակցությամբ, ԿԸՀ-ը սահմանել է այն նվազագույն թվով ընտրողների եւ ստորագրությունների քանակը, որը անհրաժեշտ է, որպեսզի նախաձեռնողական խումբը կարողանա մասնակցել ընտրություններին: Խոսքը վերաբերում է քաղաքապետի եւ սակրեբուլոյի անդամների թեկնածություններին: Ինչ վերաբերում է կուսակցություններին, որոնք մասնակցել են 2016 թվականի ընտրություններին, ապա, դրանք նույնպես, ԿԸՀ-ին պետք է դիմում ներկայացնեն մինչեւ ընտրությունների օրը՝ առնվազն 57 օրվա ընթացքում: Նրանք պետք է ներկայացնեն օրենքով սահմանված փաստաթղթերը:

Ընտրություններին մասնակցության հայտ է նեկայացվել 9 կուսակցությունների կողմից, որոնցից յոթը անցել են ԿԸՀ-ի գրանցումը: ԿԸՀ-ն շարունակում է կուսակցությունների գրանցումը, որը կավարտվի օգոստոսի 27-ին:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԻՍ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տեղական ինքնակառավարման մարմինների առաջիկա ընտրությունները զգալիորեն տարբերվում են նախորդներից:

Նախընտրական քարոզչության մեկնարկից մեկ ամիս առաջ Վրաստանի խորհրդարանը ինքնավար կառավարվող քաղաքներին զրկել է կարգավիճակից՝ Ամբրոլաուրի, Ախալցիխե, Գորի, Զուգդիդի, Թելավի, Մցխեթա եւ Օզուրգեթի: Այսպիսով, ինքնակառավարող քաղաքների կարգավիճակը պահպանվել է Թբիլիսիում, Բաթումիում, Ռուսթավիում, Քութայիսիում եւ Փոթիում:

Բացի դրանից, խորհրդարանը վերացրեց «գամգեբելիի»՝ մունիցիպալիտետի վարչության նախագահի՝ ադմինիստրացիայի ղեկավարի պաշտոնը, փոխարինելով նրանց շրջանների քաղաքապետերով:

Նախընտրական քարոզարշավի մեկնարկի հետ մեկտեղ, ուժի մեջ են մտել սահմանափակումներ, որոնք կշարունակվեն մինչ ընտրությունների արդյունքների հայտարարվելը:

Օգոստոսի 22-ից ուժի մեջ է մտել կառավարության եւ տեղական ինքնակառավարման համար 2017թ. պետական բյուջեով նախատեսված որեւէ նոր պետական ծրագրերի իրականացման արգելքը:

Բացի այդ, նախքան ընտրությունների արդյունքների վերջնական հրապարակումը հնարավոր չի լինի մեծացնել սոցիալական վճարումների գումարը կամ մտցնել արտոնություններ, որոնք նախապես նախատեսված չէին օրենքով:

Բացի այդ, քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներին չի թույլատրվում անձամբ կամ միջնորդների միջոցով փոխանցել դրամական միջոցներ, նվերներ եւ այլ նյութական օժանդակություն, վաճառել ապրանքը արտոնյալ գնով կամ խոստում տալ կանխիկ գումար կամ արժեթղթեր:

Ուժի մեջ է մտել արգելքը պետական բյուջեից ֆինանսավորվող վարչական շենքերի եւ կառույցների օգտագործման, ինչպես նաեւ՝ այլ գույքի օգտագործումը նախընտրական քարոզչության համար:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎԵԼ Է 39 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻ

Ինչպես հայտարարեց Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի խոսնակ Աննա Միքելաձեն, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների անցկացման համար, հատկացվել է 39 միլիոն լարի:

Նրա խոսքով, այդ գումարը ծախսվելու է ինչպես ընտրությունների անցկացման, այնպես էլ՝ ԿԸՀ-ի կողմից անցկացվող վարժանքների եւ տեղեկատվական քարոզարշավի վրա: Աննա Միքելաձեի խոսքով, վերոնշյալ գումարը ներառում է նաեւ ներկայացուցչական ծախսերը, ենթակառույցները, ինչպես նաեւ՝ մյուս ծախսերը, որոնք անհրաժեշտ են ընտրությունների անցկացման համար:

ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՐՁՈՒՄ Է ՄԻԱՎՈՐՎԵԼ

Առաջիկա տեղական ինքնակառավարման ընտրությունների համար «Ժողովրդավարական շարժում» եւ «Ազատ Վրաստան» կուսակցությունները համատեղ առաջադրել են Թբիլիսիի քաղաքապետի եւ մայրաքաղաքի սակրեբուլոյի նախագահի թեկնածուներին: Կուսակցությունների միացյալ քաղաքապետի թեկնածուն Կախա Կուկավան է, իսկ սակրեբուլոյի նախագահինը՝ Դմիտրի Լորթքիփանիձեն:

Միավորմանը նախորդած մամլո ասուլիսում՝ «Ժողովրդավարական շարժման» ղեկավար Նինո Բուրջանաձեն հայտարարեց, որ միավորված կուսակցությունները հետին պլան են մղել կուսակցական շահերը եւ միտված են ընտրություններում հաղթանակի: «Ընդդիմության միավորման դուռը մնում է բաց, թեպետ դա չի վերաբերում «Վրացական երազանքին» եւ «Ազգային շարժմանը»,- հայտարարեց Նինո Բուրջանաձեն:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ

ՄՈՒՆԻՑԻՊԱԼ ԲԱՆԿ
TBC BANK

«ԲԻԶՆԵՍ-ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ-2017» ԱՐՇԱՎԻՆ ԳՐԱՆՑՎԵԼ Է 661 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ավարտվեց TBC բանկի եւ «Ջեոսելի» համատեղ «Բիզնես պարգեւատրում-2017» նախագծի մասնակից ընկերությունների գրանցումը: Պարգեւատրմանը մասնակցելու ցանկություն է հայտնել 661 ընկերություն, որից սեպտեմբերին ժյուրին կհայտնաբերի տարբեր անվանակարգերի լավագույններին:

Գրանցումն անցկացվեց երկու ամսվա ընթացքում: Բոլորից շատ ընկերություններ են գրանցվել «Տարվա ստարթափեր» (231 ընկերություն) եւ «Տարվա փոքր բիզնես» (229 ընկերություն) անվանակարգերում:

Ընդհանուր առմամբ, պարգեւատրմանը մասնակից ընկերությունների թվաքանակն ըստ անվանակարգերի ունի հետեւյալ տեսքը.

Տարվա բիզնես - 153 ընկերություն
Տարվա փոքր բիզնես - 229 ընկերություն
Տարվա զբոսաշրջային բիզնես - 95 ընկերություն
Տարվա ագրոբիզնես - 42 ընկերություն
Տարվա վրացական արտադրանք - 133 ընկերություն
Տարվա ստարթափեր - 231 ընկերություն
Տարվա նորարարական բիզնես - 140 ընկերություն

Հատկանշական է, որ ընթացիկ տարվա «Բիզնես-պարգեւատրման» նկատմամբ առանձնակի մեծ է շահագրգռվածությունն այն ընկերությունների կողմից, որոնք գործում են Վրաստանի տարբեր տարածաշրջաններում:

- Մեր նպատակն է՝ նպաստել առավելագույն թվով բիզնեսի հիմնմանը եւ արդեն գործող գործարարության զարգացմանը: Հենց դա էլ դարձավ «Բիզնես-պարգեւատրում» նախագծի հիմնման նպատակը: Ուրախ ենք, որ նախագիծը տարեցտարի առավել մասշտաբային է դառնում: Անցյալ տարվա համեմատությամբ, այս տարի նախագծի մասնակից ընկերությունների թիվը նշանակալիորեն ավելացել է: Ակնհայտ է, որ պարգեւատրման նկատմամբ շահագրգռվածությունը մեծանում է, եւ առանձնակի ուրախալի է, որ ակտիվացել են տարածաշրջաններում գործող ընկերությունները: Գտնում ենք, որ սույն նախագիծը նշանակալից ներդրում է կատարում ինչպես փոքր եւ միջին գործարարության, այնպես էլ՝ ստարթափերի գործունեությունում,- ասաց TBC բանկի գլխավոր տնօրենի տեղակալ Նիկա Քուրդիանին:

«Բիզնես-պարգեւատրում-2017» նախագծի շնորհանդեսն անցկացվեց հունիսին: Այս տարի էլ նախագծի գլխավոր կարգախոսը «Ընկալի'ր հաջողությունն» է, ինչը մասնակից ընկերություններին հնարավորություն է ընձեռում իրենց հաջողության պատմությունը, սոցիալական ցանցերով ու լրատվամիջոցների միջոցով, ներկայացնել ողջ Վրաստանին:

Այս տարի առանձնակի շեշտը դրվեց գործարարության կորպորատիվ սոցիալական պատասխանատվության վրա, քանի որ արդի աշխարհում հաջող գործարարությունը, ֆինանսական արդյունքների հետ միասին, նշանակում է՝ հասարակության համար օգտավետ ու հետաքրքիր գործերի իրականացում: Հետեւաբար, նախագծերը, որոնց CSR-ի շրջանակներում իրականացնում են մասնակից ընկերությունները, հետաքրքիր եւ դրական կողմերով ներկայացվում են հասարակությանը:

«Բիզնես-պարգեւատրում-2017»-ի եզրափակիչ միջոցառումը կանցկացվի նոյեմբերին, երբ ժյուրին կներկայացնի վեց անվանակարգերում հաղթող ընկերություններին: Իսկ յոթերորդ անվանակարգի՝ «Տարվա ստարթափեր»-ում հաղթողը կհայտնաբերվի համընդհանուր քվեարկության սկզբունքով՝ սոցիալական ցանցում եւ հատուկ կայքէջում:

Նախագծի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը հնարավոր է ստանալ www.businessaward.ge կայքէջում:

ՄԱՄՈՒԿԱ ԽԱԶԱՐԱՁԵ. «ԲՈՐԺՈՄԻԻ ԱՅՐՎԱԾ ԱՆՏԱՌԻ 10 ՀԵԿՏԱՐԸ ԿՎԵՐԱԿԱՆԳՆՎԻ TBC ԽՄԲԻ ԵՎ ԲՈՐԺՈՄԻԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ»

Ինչպես հայտարարեց գործարար Մամուկա Խազարաձեն, Բորժոմիի այրված անտառի 10 հեկտարը կվերականգնվի TBC խմբի եւ Բորժոմիի ընկերության կողմից: Ինչպես հայտարարեց գործարարը. - Մեր համատեղ որոշմամբ, այս դժվարին պահին մենք կմիավորենք մեր ջանքերը եւ լրիվությամբ կվերականգնենք Բորժոմիի կրակից ոչնչացված անտառի 10 հեկտար տարածքը: Հասկանում ենք, որ դա կլինի երկարաժամկետ եւ մասշտաբային աշխատանք, սակայն մենք չենք խնայի ջանքեր եւ ռեսուրսներ, որ Բորժոմիին վերադարձնենք նախկին տեսքը: Գործարարներին եւ հանրային սեկտորին կոչ եմ անում միանալ մեզ, որպեսզի համատեղ իրականացնենք այս նշանակալից գործը:

Մամուկա Խազարաձեի նախաձեռնությանը միանալու պատրաստակամություն են հայտնել գործարար Թեմուր Ճղոնիան եւ «Կոկա-կոլա Բոթլեր Ջորջիա» ընկերությունը: